

Եղաք եւ տարակոյս լեալ, զի ոչ յԱստուծոյ<sup>9</sup> եւ ոչ ումեքէ կարացաք ունել օգնութիւն, զի մեզք մեր մեծամեծք չտային թոյլ: Իբրեւ չդոյր հնար մեզ ամենայն ուստէք, ապա սկսան թաղել զմեռեալս ի տունս եւ ի գետնափորս, եւ աղքատքն յաղբս կամ ի դուրս անարգ տեղոջ, եւ զայն՝ ծածուկ եւ զազոտ ի նոցանէ:

Եւ Ե ամ էր Լովայ մայրաքաղաքին Հայքն թագւորազն եւ իշխանատիպ ի մէջ այսպիսի դատն նեղութեան եւ տառապանաց, մեծ վշտի եւ վտանկի, մարդիք ազնիւ եւ պատուական, մեծատունք եւ փարթամք, որ այսպիսի աղէտի եւ կսկծի զիսպան: Եւ այս Ե տարիս ոչ ժամ, ոչ աղօթք եւ ոչ Աւետարանին ձայն ականջք մեր լուան եւ ոչ աչք մեր զվարդապետ կամ քահանայ տեսան: . . .

Ապա սկսան ուղղափառքն դրամ մսխել եւ զեկան ցրվել մեծամեծաց, իշխանաց եւ պարոնաց, այլ եւ ի Ղարին գնացին քանիցս անգամ եւ էմիրնի բերին եւ ոչինչ օկտեցան. զի կարգաւորքն ամէն եւ մեծամեծքն հետ Նիկօլ Եպիսկոպոսին էին. եւ զի հաւատոյ բան էր՝ չիշխէր թագաւորն եւ ոչ նախարարքն առնել դատաստան, թէպէտ շատ գանձ եւ խաղինայ տային: Եւ ի թվ. ՌՉԹնէն մինչ թվ. ՌՁԵ. Երեսուն-քառասուն հազար զուուռ խարճեցին Լովցիք, բնաւ ճարակ կամ հնար չի գտան Հայք:

<sup>9</sup> յոչ աստուծոյ: